ՀՏԴ 336.717.061(479.25)

Լ.Հ. ԱՂԱՋԱՆՅԱՆ, Ա.Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ԼՈԳԻՍՏԻԿԱՅԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Դիտարկվում են լոգիստիկայի սկզբունքների կիրառման անհրաժեշտությունը և նպատակահարմարությունը Հայաստանի Հանրապետության բանկային համակարգում՝ հիփոթեքային վարկավորման ոլորտում: Ներկայացված է բանկային համակարգում հիփոթեքային վարկավորման լոգիստիկայի՝ ֆինանսական տեխնոլոգիաների կառուցվածքների և կազմակերպական ձևը:

Առանցքային բառեր. լոգիստիկա, կառավարում, ֆինանսական տեխնոլոգիաներ, օնլայն հարթակ, հիփոթեքային վարկավորում:

Հայաստանի ներկա սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավումը պահանջում է բանկային համակարգում վարկավորման կառավարման նոր, առավել արդյունավետ և ճկուն գործիքների կիրառում, մասնավորապես՝ ֆինանսական տեխնոլոգիաների ներդրում: Բանկային համակարգում հաճախորդների ներգրավման մեծ մրցակցությունը, վարկավորման բարձր տոկոսադրույքները, հիփոթեքային և անշարժ գույքի շուկայում պահանջարկի մեծացումը (նկ.1) [1], ֆինանսական տեխնոլոգիաների ներդրման առումներով հետ մնալը, ազատ դրամական միջոցների լճացումը այն խնդիրներն են, որոնք ներկայումս բնութագրում եմ Հայաստանի բանկային համակարգը: Դրանցով է պայմանավորված բանկային համակարգում վարկավորման կառավարման նոր, արդյունավետ մոտեցումների գիտական մշակման անհրաժեշտությունը: Այդպիսի մոտեցման արդյունք կարող է լինել Հայաստանի տնտեսական պայմաններին և ՀՀ բանկային համակարգին համապատասխան լոգիստիկայի գործիքակազմի ձևավորումը՝ ֆինանսական և սմարթ տեխնոլոգիաների ներդրումը օնլայն կառավարման միջոցով:



Նկ. 1. Առաջին կիսամյակում անշարժ գույքի առքուվաճառքի գործարքները՝ ըստ տարիների

Ժամանակակից բանկային համակարգում, ուժեղացող մրցակցության պայմաններում, լոգիստիկան ֆինանսական տեխնոլոգիան դարձել է ռազմավարական հզոր գործոն: Դա բանկերին թույլ է տալիս սահմանված առաքելության շրջանակներում իրականացնել իրենց նպատակները և խնդիրները, ամրապնդել դիրքերը շուկայում՝ առավելագույնս բավարարելով սպառողների պահանջները և արագ տեղաբաշխելով ազատ միջոցները:

Տնտեսության միջազգային ինտեգրման գործընթացները և մրցակցությունը բանկերի միջև բարձրացրել են հաճախորդների վարկավորման պահանջմունքների մակարդակը. նրանք այժմ պահանջում են իրենց կարիքներին արագ արձագանքում, բարձր որակի սպասարկում և ծառայություններ՝ առավել ցածր տոկոսներով: Նման պայմաններում հաճախորդների կողմից բանկերի գործունեությունը գնահատվում է ոչ միայն նրանց կողմից առաջարկված վարկատեսակների և մատուցած ծառայությունների որակի, այլև վարկատեսակների ժամանակին անմիջականորեն հաստատման և տրամադրման, ցածր տոկոսադրույքներ առաջարկելու կարողության տեսանկյունից:

Տնտեսական և գործնական փորձը վկայում է ֆինանսական տեխնոլոգիաների՝ որպես լոգիստիկայի գործիքի ներդրման արդյունավետության մասին, որի գործողությունների ոլորտը գնալով ընդլայնվում է՝ զուգակցվելով բանկային համակարգում վարկավորման կայուն ցուցանիշների հետ: Այդ է պատճառը, որ ներկայումս ֆինանսական տեխնոլոգիաները՝ որպես լոգիստիկայի գործիք, օգտագործվում են միջազգային առաջատար բանկերում ու ֆինանսական կազմակերպություններում [2], նաև Հայաստանի Հանրապետության որոշ բանկերի կողմից զարգացման գործընթացներում՝ նրանց մրցունակության բարձրացման նպատակով:

Բանկային համակարգում ֆինանսական տեխնոլոգիաների լոգիստիկական համակարգը բարդ կազմակերպական համակարգ է, որը կազմված է որոշակի տարրերից /ենթահամակարգերից/, որոնք փոխկապակցված են տեղեկատվությանն ուղեկցող հոսքերի կառավարման և արհեստական ինտելեկտի միասնական գործընթացում:

Հիփոթեքային վարկավորման լոգիստիկայի՝ ֆինանսական տեխնոլոգիայի կազմակերպման ընդհանուր տարրերի կազմը բերված է նկ.2-ում:



Նկ. 2. Հիփոթեքային վարկավորման լոգիստիկայի՝ ֆինանսական տեխնոլոգիաների կազմակերպումը

Հիփոթեքային վարկավորման լոգիստիկայի՝ ֆինանսական տեխնոլոգիայի կազմակերպական կառուցվածքը ներկայացնում է հիփոթեքային վարկավորման կարգերով և օրենքներով պահանջվող ինֆորմացիայի (որոշումների վրա ազդող տարրերի) և կատարող մարմինների (որոշումներ կատարող տարրերի) գործառութային-կողմնորոշված և աստիճանական կարգավորված ամբողջություն: Այն ներառում է վարկավորման գործընթացի կառավարման համալիր գործառույթները և պետք է կազմակերպվի օնլայն հարթակում՝ վարկավորման գործընթացի իրականացման հաջորդականության և փոխկապվածության որոշմամբ:

Հիփոթեքային վարկավորման լոգիստիկայում ֆինանսական տեխնոլոգիայի կազմակերպման գործընթացները ապահովվում են վարկավորման լոգիստիկական կապուղու տեխնիկա-տեխնոլոգիական կառուցվածքը օնլայն հարթակով, որը, ըստ էության, հանդիսանում է կառավարող որոշում ընդունող համակարգ: Այլ կերպ ասած, լոգիստիկական կապուղու տեխնիկա-տեխնոլոգիական կառուցվածքը վարկավորման միջոցով ազատ դրամական միջոցների արագ տեղաբաշխման գործընթացն է:

Բանկային համակարգում լոգիստիկայի կիրառման՝ ֆինանսական տեխնոլոգիաների ներդրման արդիականությունը, նպատակահարմարությունը և արդյունավետությունը արտահայտվում են հետևյալում.

1. Ֆինանսական տեխնոլոգիայի ներդրումը ձևավորում է հաճախորդների արագ սպասարկման համակարգ, նպաստում է սպասարկման կառավարման կենտրոնացմանը, հաճախորդների ներգրավմանը և տնտեսական արդյունավետության բարձրացմանը:

2. Ֆինանսական տեխնոլոգիայի ներդրումը նպաստում է ծախսերի իջեցմանը՝ ի հաշիվ նյութական ռեսուրսների փոքրացման, վարկերի

հաստատման ժամանակի կրճատման և աշխատուժի վերաբաշխման:

Տնտեսագիտական գրականության մեջ կառուցվածքային տեղաշարժերը բնութագրող մոդելները հիմնականում հիմնվում են այն փաստի վրա, որ տնտեսության տարբեր ոլորտներ տեխնոլոգիական փոփոխությունների նկատմամբ ունեն տարբեր հակվածություններ: Ըստ այդ մոտեցման՝ տնտեսության տարբեր հատվածների տեխնոլոգիական փոփոխություններն առաջ են բերում տնտեսության ավելի բարձր արտադրողական հատվածներից աշխատուժի վերաբաշխում դեպի տնտեսության ավելի դանդաղ զարգացող հատվածները [3]:

3. Ֆինանսական տեխնալոգիայի ներդրման շրջանակներում ստեղծվում է աշխատանքային, ֆինանսական, սպասարկման և ազատ միջոցների արագ տեղաբաշխման հոսքերի համալիր կառավարման համակարգ, որն ապահովում է լոգիստիկական գործընթացների առավելագույն արդյունավետություն:

4. Ֆինանսական տեխնոլոգիաների ներդրումը ձևավորում է բարձր մրցակցություն, ինչն էլ իր հերթին նպաստում է տոկոսադրույքների նվազմանը:

Բանկային համակարգում վարկավորման ոլորտում ֆինանսական տեխնոլոգիաները՝ միմյանց կապակցելով անհրաժեշտ և պահանջվող ինֆորմացիայի հավաքագրումը, հավաքագրված ինֆորմացիայի համապատասխանությունը գործող օրենքներին և կարգերին, որոշման կայացումը, ապահովում է ներբանկային տնտեսական և տեխնոլոգիական հոսքերի զուգակցումը: Դրանով իսկ ֆինանսական տեխնոլոգիաների լոգիստիկան հնարավորություն է տալիս փոխելու բանկերի առևտրային գործունեության հայեցակարգը, վերակողմնորոշում է կառավարման համակարգը դեպի կազմակերպման նոր մեթոդներ, տնտեսական նոր մտածողություն:

Ներկայումս այդպիսի մոտեցումը դրսևորվում է բանկային համակարգի միանշանակ, որոշակիացված արտաքին և ներքին անմիջական կապերից անցում կատարելով օնլայն բնույթի կապերին: Վարկավորման գործընթացում անորոշության գործոնների ազդեցության ընդլայնումը՝ սուբյեկտիվ կարծիքն ու որոշումները և հաճախորդների հոսքի անընդհատության ապահովումը, անհրաժեշտություն են առաջացնում մշակելու բանկային համակարգում տոկոսային եկամուտից կախված բացասական հետևանքների հավանականության իջեցման մեթոդներ:

Հիփոթեքային վարկավորման լոգիստիկայի՝ ֆինանսական տեխնոլոգիայի կազմակերպումը բանկերում վարկավորման գործիքների, ձևերի, մեթոդների և ընթացակարգերի նպատակահարմար կարգավորված ամբողջականությունն է: Այն կարող է իրականացվել՝ հաշվի առնելով հետևյալ հիմնական սկզբունքները.

• վարկավորման լոգիստիկայի՝ ֆինանսական տեխնոլոգիայի կազմակերպումը կազմակերպության ընդհանուր ռազմավարության շրջանակներում;

• վարկավորման լոգիստիկայի՝ ֆինանսկան տեխնոլոգիայի կազմակերպման նորարարական բնույթը, այսինքն՝ բանկերում հիփոթեքային վարկավորման շրջանակներում պետք է իրականացվեն շարունակական աշխատանքներ վարկավորման նոր կազմակերպական ձևերի և վարկավորման գործընթացի կառավարման արդյունավետ մեթոդների որոնման ուղղությամբ:

Ընդհանրացնելով կարելի է հանգել հետևյալ եզրակացության.

➢ Ֆինանսական տեխնոլոգիայի ներդրումը կիրառելով միևնույն օնլայն հարթակում, կբարձրանա մրցակցությունը բանկերի միջև, ինչն էլ իր հերթին կհանգեցնի տոկոսադրույքների նվազմանը:

➢ Հիփոթեքային վարկավորումը կիրառելով օնլայն հարթակում՝ կապահովվի օպերատիվ կառավարում, ինչն էլ իր հերթին կհանգեցնի հաճախորդների հայտերի արագ սպասարկմանը:

➢ Բանկերին թույլ կտա լուծել վարկավորման ոլորտում ռազմավարական նշանակության խնդիրները՝ սահմանված առաքելության շրջանակներում կարճ ժամկետներում իրականացնել վարկավորման ոլորտում իրենց նպատակները և խնդիրները, ամրապնդել դիրքերը շուկայում՝ առավելագույնս բավարարելով սպառողների պահանջները և արագ տեղաբաշխել ազատ միջոցները:

➢ Միաժամանակ, վարկավորման արդյունավետ կառավարումը հնարավոր չէ առանց համապատասխան տեխնիկական և տեղեկատվական ապահովման, առանց ֆինանսական տեխնոլոգիայի ներդրման համար անհրաժեշտ կադրային ներուժի ստեղծման:

➢ Սակայն գործնականում ՀՀ բանկային համակարգում հիփոթեքային վարկավորման ֆինանսական տեխնոլոգիայի ներդրումը դեռևս լիովին պահանջարկված չէ: Անհրաժեշտ է մշակել օրենսդրական ոլորտում լոգիստիկական գործիքակազմի կիրառման հստակ ալգորիթմ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **ՀՀ Անշարժ Գույքի Կադաստր:** ՀՀ անշարժ գույքի շուկան 2018թ. առաջին կիսամյակում (վերլուծություն). - 65էջ:
2. **KPMG, H2 Ventures.** Leading Global Fintech Innovators. 2017 FINTECH 100. - 112p.
3. **Մնացականյան Ռ.** Տնտեսության կառուցվածքային տեղաշարժերի վրա տեխնոլոգիական փոփոխությունների ազդեցության գնահատումը փոքր բաց տնտեսության համար (Հայաստանի օրինակով): ՀՀ Կենտրոնական բանկ. Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոն: Հետազոտական աշխատանք. – 2017. - 50 էջ:

Л.Г. АГАДЖАНЯН, А.М. МУРАДЯН

ВНЕДРЕНИЕ ЛОГИСТИКИ ИПОТЕЧНОГО КРЕДИТОВАНИЯ В БАНКОВСКОЙ СИСТЕМЕ РА

Рассматриваются необходимость и целесообразность применения принципов логистики в банковской системе Республики Армения в сфере ипотечного кредитования. Представлены структуры финансовых технологий и формы организации логистики ипотечного кредитования в банковской системе.

Ключевые слова: логистика, управление, финансовые технологии, онлайн-платформа, ипотечное кредитование.

L.H. AGHAJANYAN, A.M. MURADYAN

INTRODUCTION OF LOGISTICS OF MORTGAGE LENDING IN THE BANKING SYSTEM OF REPUBLIC OF ARMENIA

The necessity and expediency of applying the principles of logistics in the banking system of Republic of Armenia in the sphere of mortgage lending are considered. The structures of financial technologies and forms of organization of logistics of mortgage lending in the banking system are presented.

Keywords: logistics, prospects, management, financial technologies, online platform, mortgage lending.

ՀՏԴ 658.8

Ա.Լ. ԱՂԱՋԱՆՅԱՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

Դիտարկվում են կազմակերպության կայունության էությունը, հիմնական բնութագրերը և դերը տնտեսական զարգացման գործընթացում: Սահմանվել է կայունություն հասկացությունը, և բացահայտվել է նրա սերտ կապն արտաքին միջավայրի հետ: Վերլուծվել են արդյունաբերական կազմակերպության տնտեսական ցուցանիշները, և գնահատվել է նրա գործունեության կայունության մակարդակը:

Առանցքային բառեր. կազմակերպություն, կայունություն, հավասարակշռություն, հայեցակարգ, շահույթ, արտաքին միջավայր:

Կազմակերպության կայունությունը լայն հասկացություն է: Այն կազմակերպության հատկանիշն է, նրա՝ արտաքին և ներքին ազդեցությունների պայմաններում գործելու և զարգանալու կարողությունը՝ պահպանելով իր հավասարակշռությունը: Կազմակերպության կայունությունը դրսևորվում է իր ամբողջա-